

ճարներ, արձաններ, արձանա-
գրութիւններ, ճարտարապետու-
թեան աննման ստեղծութիւններ,
բազմաթիւ ձեռագիր գրքեր,—
իսկ իրանք չին քաղաքակրթու-
թեան ներկայացուցիչ ազգերը՝
տղէտ, անգրագէտ, գրեթէ վայ-
րենի, մոլեռանդ, նախապաշար-
ված, լոյսի, առաջադիմութեան,
ուսման թշնամի, անշարժ ամբօխ
են ներկայացնում այժմ...
Մենք խօսում ենք Կովկասեան
բնիկների վրա, բայց չենք խօ-
սում թուրքերի, մոնղոլների վրա,
որոնք բնակվելով մեր երկիրնե-
րում, աւելի էլ մեծ անշարժու-
թեան, յետադիմութեան խմոր
դարձան Կովկասեան ազգաբնա-
կութեան մէջ:

Եւ ահա մենք տեսնում ենք
թէ չարիւր տարի է որ Ռու-
սաստանը տիրել է այդ երկիր-
ների վրա, բայց մեր ամբօխի
մէջ, մանաւանդ մեր մահմետա-
կան ամբօխի մէջ դեռ չէ սկսել
մուտք գործել լուսաւորութեան
նշոյն անգամ: Կրանք մնում են
նոյն վայրենի դրութեան մէջ,
ինչպէս էին դարերից առաջ և
երեւի դեռ կը մնան նոյն դրու-
թեան մէջ դարերից յետոյ: Դա
մի տխուր ապագայ է:

Բաւական չէր ժողովրդի դա-
րևոր տգիտութիւնը, դրան աւե-

լացաւ մահմետական մոլեռան-
դութիւնը, որ սկզբունքով յան-
ցանք է համարում որ և է ու-
սում, բացի դորանի ուսումից...

Մարդս մոլորվում է, երբ մտա-
ծում է այդ տխուր ապագայի
վրա:

Եւ ի՞նչ հնար կայ դուրս բե-
րել այդ ազգերը նրանց դարևոր,
նրանց համար սուրբ աւան-
դութիւն դարձած տգիտու-
թիւնից:

Եմբողջ Դադստանը մահմե-
տական է, Կովկասեան բոլոր
թուրքերն ու պարսիկները մահ-
մետական են, կան մեր երկրում
անթիւ մահմետական հայեր ու
վրացիներ: Ի՞նչ պէտք է արած
այդ ահագին, միլիոնաւոր ամ-
բօխի հետ, նրա մէջ գտնել ամե-
նափոքր ուսում մտցնելու հա-
մար: Ոչ ուսմանը, ոչ էլ հայերը,
որոնք միւս բնիկ ազգերից մա-
սամբ բարձր են, չիմացան զրա-
ւել իրանց դպրոցների մէջ մահ-
մետական ամբօխը: Ուսում տա-
րածել նրանց մէջ իրանց մայրենի
լեզուով, ասում են շատերը, ահա
միակ հնար... Մենք այդ մի-
ջոցի դէմ ոչինչ չունենք, բայց
ինչպէս տարածել, քանի որ ին-
քն ուսումը յանցանք է համար-
վում, թէ կուզ մայրենի, պարսից
և թուրքաց լեզուով աւանդվէր

նա, եթէ այդ ուսումը դորանից
դուրս է, եթէ այդ ուսումը կը
լինի թաքսանութիւն, աշխար-
հապրութիւն, պատմութիւն, ու-
րոնք չը կան դորանի մէջ:

Ի՞նչ և իցէ մենք յանցաւոր
կը լինենք ապագայի առջև, մեր
յաջորդների առջև, եթէ չը կա-
րողանանք քիչ թէ շատ ներգոր-
ծել մահմետական ամբօխի վրա
նրա մէջ անշարժութիւնը խախ-
տել ջանալով:

Իսկ ապագայում մահմետա-
կանութիւնը, — այդ չը պէտք է
մոռանանք, — սպառնալի վտանգ է
ներկայացնում մեզ ամենիս հա-
մար, եթէ նրա շրջանի մէջ
մուտք չը կարողանայ գործել
լուսաւորութիւնը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք առիթ ունեցանք տեսնել այս օրերս
մի վրայի լուսանկար, պ. Բոնիօլի ֆոտոգրա-
ֆիաները կախեթի, Նիսիպետալի և Ղարաբա-
ղի այլ և այլ հնութիւնների Այդ հնութիւնների
մէջ կան թէ քրիստոնէական հայ և վրացի յի-
շատակներ, եկեղեցիներ, մատուռներ, վանքեր,
և թէ նախաքրիստոնէական հնութիւններ, ինչպէս
օրինակ աղանների կոպալաշտական արձաններ,
ինչպէս օրինակ Նուխու կողմերում գտնված
քարից տաշած մի մեծ ոչխար, որ համարվում է
աղանների կուրք: Այդ արձանը դիտաւորութիւն
կայ տեղից վեր առնել և տեղափոխել Թիֆլի-

սեան թանգարանը: Լուսանկարները շատ զեղե-
ցիկ են և հանգիստ են մեծ դիմաց: Հնութիւն-
ների թոււը նշանաւոր է նոյնպէս մի շատ զե-
ղեցիկ լուսանկար ճաթիկ հայոց վանքի և նրա
գաւթիւնում գտնված մի քարայր անապին սիւնի,
որ կանոնաւոր կերպով շարժվում է, եթէ նրան
թելի վրայ տրվի Սիւնը կտորներից է բաղկա-
ցած: Այդ շինութեանը զարդանիւր մինչև այժմ
հետազոտված չէ և իր նմանը ունի միմիայն Հա-
յաստանի մի քանի այլ տեղերում և անհաւա-
տալ կը թվէր Նիսիպետալի ճարտարապետների
կարծում են, որ սիւնի տակ մի մեծ մետաղեայ
թասի մէջ մտնել է անգամ: Պ. Բոնիօլ հանած
ունի նոյնպէս հայերի, լեզգիների, ինդիօնների,
թուրքերի տեղական տիպերը: Պարոնը դիտաւո-
րութիւն ունի ներկայացնել իր պատկերները
մեզ մօտ լինելու հնագիտական ժողովին:

Պ. Մանուէլ Անանեան խնդրում է մեզ տպել
հետեւեալը: «Այս վերջին ժամանակներս շատերը
խօսեցին մեր ազգային բանաւոր աւանդութիւն-
ները հաւաքելու մասին, ուստի յայտնում եմ,
որ ես 1872—1875 թւականը իմ հայրենի վան
քաղաքում ժողովել եմ հազարաւոր առանձին
առակներ, հանելուկներ, հեքիաթներ, երգեր,
մի խօսքով բանաւոր աւանդութեան ամեն տե-
սակները: Այժմ ես կամենում եմ դուքա բոլորն
ի միասին վաճառել և այն խիստ չափաւոր
գնով գոհ կը լինեմ, եթէ դուքա վրա ա-
րած ծախսը յետ ստանաւ: Գնել կամեցողը թող
բարեհաճի «Փորձի» խմբագրատանը հարցնելու
ինձ»:

Հին-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ գրում են, որ հո-
գեւոր ուսումնարանի հոգաբարձուներից երկուսը
հեռացան, իրանց ծառայութիւնը փոխվելու
պատճառով: Դրանք են պ. պ. Սարգիսեան-
դեան և Օրբելի: Այժմ բոլոր հոգեւոր դպրոցը
կառավարելու համար մնացել են տեղացի հոգա-
բարձուների վրա:

Մեզ գրում են Հին-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ, որ
այդտեղ սաստիկ ցրտեր են սկսվել: Ուսումնա-

չունէին: Մէկի մօտ հիւր լինելիս, միւսը ան
պատճառ կամ կը վերադառնար, կամ կը նախանձ-
վէր և կամ մի ուրիշ զայնազալ կը սարքէր: Կը-
նիկները ընդհանուր սեղանատուն չունէին, այ
իւրաքանչիւրը իր առանձին խոհանոցն ունէր:
Այս պատճառով խանր, հետեւելով բոլոր մեծ
մարդերի սովորութեանը, միշտ իր վրանումն էր
ձաշու և միշտ ունէր իր մօտ հիւրեր իր ցեղի
նշանաւոր պետերից: Հացը, առատաձեռնութիւն-
նը զլխաւոր պայմանն էր այդ գիւղականներին իր
հետ կապելու: Բայց այս անգամ ոչ ոք չէր կանչ-
ված, որովհետեւ այնտեղ կային քրիստոնէայ հիւ-
րեր, որոնց հետ սեղանակից լինելը կարող էր
պղծել մահմետականներին: Չէր կանչված և ցեղի
չէր, հոգեւոր գլուխը, որը խանի սեղանին ան
պակաս հացկատակն էր: Այնտեղ կային, բացի
իշխանից և պատանի Ստեփաննոսից, գլխաւոր
բարաւոջալը (մուշի-բալին) և բժիշկ գերվիշը
որին խանի խնդրելով չէր ուզարկել էր նրա
մօտ, որ հրաշալի մաջ ու է ի մասին տեղեկու-
թիւն ստանայ: Այդ տարօրինակ մարդը իր օտա-
ւոր կերպարանքով իր վրա էր դարձնում բո-
լոր ուշադրութիւնը: Գունակահայ հին մերկիմաս-
տակների պէս, նրա ամբողջ հագուստը բաղկա-
նում էր մի կտորից միայն. դա հասարակ կտա-
ւից կարված մի սպիտակ շապիկ էր, հայոց ժամի
շապիկների նման, որ իջնում էր մինչև կրծքի-
ները: Բացի դրանից ունէր մի վագրի մորթի,
որ նստելու ժամանակ իր տակն էր ձգում որպէս
օթոց, իսկ ման գալու ժամանակ ձգում էր ու-
սերի վրա որպէս թիկնոց: Գլխարկ չունէր, նրա
տեղը բռնել էին գլխի խիտ, խճճված մազերը,
որոնք երբէք մկրատի և սանրի երես չը տեսնե-
լով, թաղթի և էին ստացել: Մօտքը նոյնպէս
սանրված չէր: Երևում էր, այդ գերվիշը պատ-
կանում էր ճագիրների այն դասակարգին, որոնք
ձգնութեան և իրանց անձը զրկելու ու տանջե-
լու փորձութիւնների մէջ, մոտենում են գտնել
մի հոգեւոր և գերբնական գոյափոխութիւն, որ
կը հնչտացնէր նրանց հաղորդակցութիւն ունե-
նալ անմարմին էակների հետ: Մերկ պարանոցի
վրա, կանանց մանեակների նման, անցուցած
էին զանազան տեսակ յուշումներ, որոնք կա-
խաղաղական և թիկնամանական նշանակութիւն
ունէին: Երկու ձեռքերի, մինչև արմուկները
մերկ, բազուկների վրա փաթաթած էին ռոգթե-

լու «տէրոգորմաներ» (իւսրից *) չնված,
սև և խոշոր հատիկներով: Երեսի թուխ կաշին,
գլխի և մօրուքի սև, և փոքր ինչ ստանանաւ մա-
զերը ցոյց էին տալիս, որ այդ թափառաշրջիկ մեր-
կիմաստասէրը եկած պիտի լինէր Արաղստանի խոր-
քերից: Նրա խոպրտ ձայնը և պարսկական մաքուր
արտասանութիւնը հաստատում էր այդ: Բայց
նրա խօսակցութիւնը աւելի երգի յանդ և ներդաշ-
նակութիւն ունէր, քան հասարակ խօսակցութեան:
Նա աւելի պատասխանում էր, քան թէ խօսում
էր: Նրա պատասխանները կարճ հանելուկների
և ունէին, որոնց պէտք էր մեկնել, բացատրել:
Հաշի ժամանակ էր: Խանի մանկաւիկներից
մէկը, մի ձեռքում բռնած արծաթէ լազան, միւ-
սում արծաթէ ջրածիկ (աֆտաֆայ) մտաւ վրա-
նը: Նախ լազանը դրեց խանի առջև, չոքեց,
սկսեց ջուր անել նրա ձեռքերի վրա, նա լուաց-
վեցաւ: Յետոյ լազանը դրեց գերվիշի առջև. նա
հրաժարվեցաւ լուացվելուց, յայտնելով, թէ
լուացվելու սովորութիւն չունի: Յետոյ լազանը
դրեց իշխանի առջև, իսկ նրա լուացվելուց յի-
տոյ հերթը հասաւ Ստեփաննոսին և զլխաւոր
բարաւոջալին: Բայց պէտք է ասած, որ ամենքը
աւելի թրջում էին իրանց ձեռքերը, քան թէ
լուացվում էին:

Գերվիշի իւրաքանչիւր խօսքը, իւրաքանչիւր
սովորութիւնը միշտ խորհրդաւոր նշանակութիւն
ունենալով պարսիկների աչքում, խանը հետա-
քըքրվեցաւ իմանալ, թէ ի՞նչու նա լուացվելու
սովորութիւն չունի:

— Պէտք է մաքրել ներքին մարդը, պատաս-
խանեց նա:
— Ներքին մարդը ո՞րն է:
— Հոգին:

Եւ իրաւ, նա երկար տարիներ չէր լուացվել,
և ամբողջ մարմինը կեղտով պատած, հոտում
էր: Աւելի զղուելին այն էր, որ զանազան մի-
ջատներ համարձակ կերպով չրջում էին, վրժ-
ված էին նրա մօրուքի և գլխի մազերի մէջ,
մարմնի վրա, որոնց յօժարակամ նա թոյլ էր
տուել ուսել իր անձը *):

*) Իւսր մի տեսակ ծովային կենդանի է պո-
լիպների տեսակից:

*) Մահմետական ուստաւորները Մեքքայ գը-
նալու ժամանակ, նոյնպէս մեղք են համարում
ոչնչացնել իրանց մարմնի միջատները:

Լուացվելուց յետոյ մի ուրիշ մանկաւիկ տա-
րածեց յատակի գորգերի վրա սեղանի գոյնզոյն
սփռոցը: Սփռոցը գործված էր Սպահանում և
նրա ծոպաւոր եղբերի վրա արաբական խոշոր
տառերով տպված էին զանազան աղօթքներ դո-
րանից և այլ գրքերից: Մէջտեղում գունաւոր
թելերով ասղեգործած էին հրեշտակների պատ-
կերներ, որոնք ձեռքներին բռնած ունէին փոք-
րիկ մանգաղներ և ցորենի հասկերից փունջներ:
Այդ բոլորը արտայայտում էին խանի կրօնական
ջերմ հաւատը: Իսկ աւելի ազատամիտ մահմե-
դականների սեղանի սփռոցը Պարսկաստանում
այլապէս է պատրաստվում: Դորանի աղօթքների
փոխարէն լինում են Հաֆիսի կամ Սաադիի եր-
գերից զեղեցիկ կտորներ, իսկ հրեշտակների փո-
խարէն՝ կիսամերկ աղջիկներ, կամ մշտադալար
հիւրների ու փէրիների հրապուրիչ պատկերներ,
որոնք կամ պար են գալիս, կամ զինու բաժակ-
ներ են մատուցանում քէյֆի մէջ ընկղմված մի
հնչտասէր տղամարդի:

Երբ սեղանի սփռոցը տարածվեցաւ, մի քանի
ուրիշ մանկաւիկներ, գլխների վրա դրած, բե-
րեցին երեք մեծ պղնձ սիններ *), որ սքողած
էին թանգալին ծածկոցներով, որոնց եղբրը
զարդարած էին ոսկեթել ծոպերով: Սիններից
մէկը դրեցին խանի առջև, միւսը իշխանի և
Ստեփաննոսի առջև, իսկ երրորդը գերվիշի
և զլխաւոր քարաւոջալի առջև: Երբ բարձրացրին
ծածկոցները, սիններին վրա տեսնվեցան շարված
բազմաթիւ մեծ և փոքր պղնձէ պնակներ, լի
զանազան տեսակ կերակուրներով, որոնց տա-
քութիւնը պահպանելու համար ծածկված էին
նոյնպէս պղնձէ կալպակներով: Այդ անօթները
իրանց զեղեցիկ քանդակագործութիւնով, որպէս
պարսկական արհեստի և ճարտարութեան ճոխ
արդիւնք, կարող էին ամենանշանաւոր մուզէու-
մի զարդարանքը լինել:

Բայց Թորոս իշխանի ուշադրութիւնը դրաւ
մի ուրիշ բան. ոչ միայն խանի սինն և նրա
կերակուրները բաժանված էին միւս հիւրերի բա-
ժիններից, — այլ նա նկատեց, որ խանի սինի
ծածկոցի ճոթերը կնքված էին մօմով: Նա ա-
ռաջ խնամքով նայեց կնիքներին, յետոյ իր
ձեռքով վեր առեց ծածկոցը:

*) Սին ի նշանակում է պղնձից կամ արծա-
թից շինված մատուցարան, որը բոլորակ և ունի:

Իշխանը չը կարողացաւ իր հետաքրքրութիւնը
զսպել և կասկածաւոր կերպով հարցրեց.

— Այդ ինչ կնիքներ են:
— Ի՞նչու էք դարմանում, խօսեց խանը ժպ-
տելով, — այն խոհանոցը, ուր պատրաստվում են
ինձ համար կերակուրներ, գտնվում է մօրս ան-
միջական հսկողութեան ներքոյ, նա սովորու-
թիւն ունի իր ձեռքով անել կերակուրները և
իր կնիքով կնքած ինձ ուղարկել:
— Ի՞նչու համար:
— Ի՞նչպէս ինչու համար. կերակուրները կա-
րող են թունաւորել:
— Ո՞վքեր:
— Կնիքները: Միթէ կարելի է նրանց հաւատալ,
եթէ ինձ հետ թշնամութիւն էլ չունենան, կա-
րող են կաշառված լինել դրսից: Անցեալ տարի
փոքր էր մնում, որ ես պիտի մուշէի, եթէ ինձ
չազատէր մի թարվիզցի հայ բժիշկ, փաւի մէջ
թոյն էին խառնած, ես կերայ առանց զգալու
խօսքի սկսեցին աղիքներս կտրատվել: Այն օրից
մայրս արգելեց այդ քածերին իմ խոհանոցը
մտնել, և կերակուրների սինն կնքված է ու-
ղարկում ինձ, մի գոցէ սպտաւորները նոյնպէս
չարութիւն գործեն: Ախար ամենն էլ այստեղ
բարի պտուղներ չեն:

Խանը այնպէս հասարակ կերպով էր խօսում
իր ընտանեկան զազանիքների վրա, կարծես,
այնտեղ մի սովորական բան լինէր թունաւորե-
լը, սպանելը: Կնիքները, նրա կարծիքով, կենքի
ընկերներ չէին, այլ մի տեսակ անհաւատարիմ
առարկաներ, որ լաւ չէին ծառայում, որոնց
վրա յոյս դնել չէր կարելի:
— Թայտնվեցաւ թու աւորողը:
— Թայտնվեցաւ. ես հրամայեցի անդամին
ձգեցին մի սուպրակի մէջ և խենջարներով ծակ-
ծկեցին:

Պարսիկների մէջ հարեմական դրութիւնը կնոջ
վերաբերութեամբ պահպանվում էր և պատժի
ժամանակ: Դահիճը չը պիտի տեսնէր իր զօրի
երեսը, այս պատճառով նրան սկզբից ձգում էին
մի մեծ սուպրակի մէջ և բերանը կարում: Գոր-
ծողութիւնը կատարվում էր սուպրակի դրսից, երբ
ամեն ինչ վերջացած էր, մի և նոյն արիւնաթա-
թախ պատանի մէջ դիակը տանում թաղում
էին:

Խանը մինչև անկամ պատմեց այն մանրամաս-

բաների բնակարանները թէև տաքացնում են, բայց պատերից և առաստաղից ջուր է կաթում, այնքան խոնավ են ուսումնարանների բնակարանները: Ուսուցիչները և աշակերտները տկաքանում են:

Իգլիկի մեղ գրում են: «Իգլիկը այժմ բաժանված է երկու կուսակցությունների վրա, որոնցից մէկը կամենում է առաջարկել կառավարութեանը որ իգլիկը քաղաք դառնայ, իսկ միւսը չէ կամենում որ այդ գիւղը քաղաք դառնայ: Այս պատճառով սաստիկ վեճ է շարունակվում բնակիչների մէջ:

Մեղ գրում են ՇՈՒՇՈՒՅ որ զիտաւորութիւն կայ այդ քաղաքում ր է ա լ ա կ ա ն դպրոց բաց անել: Բայց քաղաքը բաժանված լինելով երկու որոշ թաղերի՝ մինը հայոց իսկ, միւսը թուրքաց, թաղերից իւրաքանչիւրը կամենում է որ զըպրոցը իրանց մօտ լինի: Հայոց թաղը ասում է որ դպրոցի շինութիւնը այդ թաղում արդէն պատրաստ է, ուրեմն ինչ հարկ կայ նորը շինելու թուրքաց թաղում, իսկ թուրքերը ասում են, որ եթէ դպրոցը նրանց թաղում չը շինվի, նրանք ոչինչ միջոցներ չեն նուիրի դպրոցը պահպանելու համար:

Հին-ՆԱԽԻՋԵԼԱՆԻՅ մեղ գրում են, որ այդ քաղաքի հայ երկտասարդները զիտաւորութիւն ունեն մի թաղապետական ներկայացումն տալ յօգուտ հոգեւոր դպրոցի, բայց մոլորված են մընացել, որովհետեւ հայուհիներին ոչ մի կին և ոչ մի աղջիկ չեն կամենում մասնակցել ներկայացմանը: Նախիջևնացիները սիրում են զուարճութիւնները, բայց նրանցից ոչ մինը չի համաձայնվի որ իր կինը կամ աղջիկը բեմ դուրս գան:

Մեղ հաղորդում են ԶԱՔԱԹԱԼԻՅ որ մի պարսիմ Մէլիք-Նուրբաբեանցի շնորհով յունվարի 3-ին հացը Զաքաթաւում էժանացաւ: Այժմ հացը առաջին տեսակի ծախվում է 4 կօպէկով, երկրորդ տեսակի 3½ կօպ: Քանի մի

նութիւնները, որ առիթ էին տուել այն շանդգամին թոշնաւորել իրան. ասաց, որ նա մի հասարակ գիւղացի աղջիկ էր, մի օր որսորդութեան ժամանակ տեսաւ նրան լեռների վրա, ոչխարներ էր արածացնում. տեսաւ և հաւանց նրան, ներքիններին մէկին ուղարկեց նրան բերեցին իր կանանցը. աղջկայ ծնողները ուրախացան, որ նա ընկաւ խանի կանանցը, թէ և մի ուրիշ տղայի հետ նշանված էր, բայց շանդգամը երեի չը մոռացաւ նրան, և խանին սպանելով, աշխատում էր կրկին ընկնել իր սիրելիի գիրկը:

Հարեմական խնորհանքները, խեղճ կնոջ կեանքական պատմութիւնը, թոյնը,—այդ բոլորը այն աստիճան անախտօք տպաւորութիւն գործեցին թէ իշխանի և թէ պատանի Ստեփաննոսի վրա, որ նրանք բոլորովին կորցրին իրանց ախորժակը մի բան ուտելու, թէ և պարսկական խոհանոցի արդիւնաբերութիւնը հրապուրելու չափ համադրւում էր: Պղնձէ պնակների կաշկանքները բարձրացնելով, գտան նրանց տակ ամեն տեսակ խորթիկներ, սկսեալ մսեղէններից, մինչև ընդեղէն, բանջարեղէն կերակուրները և բազմատեսակ անուշեղէնները: Նրանց մօտ դրած էին անագին ամանների մէջ զանազան տեսակ քաղցր չէրբէթներ և մածնաթան (արգուղ), որոնք պէտք էր խմել անագին շերտիկներով, որ խիստ նուրբ և զեղեցիկ կերպով շինված էին չիմաթի դեղին փայտից: Ողբից ըմպելիքներ չը կային: Գանակ, պատառաքաղ, սեղանի այսպիսի պարագայք չը կային: Բոլոր կերակուրները պէտք էր ուտել մատներով: Երբեմն խանը իւղաթաթախ մատենբով վեր էր առնում իր բաժնից մի պատառ տապակած միս կամ մի բուռը փլաւ, և զննելով իշխանի պնակի մէջ, ասում էր:—Կերեք, դա լաւ կտոր է: Այդ առանձին ուշադրութիւն և առանձին պատիւ էր հիւրին: Կերելու ոչ մի կերակուր չը դիպաւ, յայտնելով, թէ սովորութիւն չուէր մեղէն կերակուրներ ուտելու: Նրա կարծիքով, այդ մի տեսակ գազանութիւն էր, որ մի անասուն, մորթում, ուտում էր ուրիշ անասունի միսը: Նա առեց մի կտոր ցամաք հաց, թաթախեց աղի մէջ և կերաւ: Այդ եղաւ նրա ճաշը: Թոյնը հեռացաւ սեղանից, կուճ եկաւ վրանի մի անկիւնում, և հանց իր կշիռից քարշ ընկած, հովուի մախաղի նմանութիւն ունեցող գրպանից

օր առաջ հացը ծախվում էր 6 և 5 կօպէկով: Ուրիշ մթերքներն էլ սկսեցին էժանանալ:

«Մշակ» Լրագիր թիվ 111-ի անցեալ տարւոյ բաժանորդներից ոմանք կարծում են որ մենք նրանց կը շարունակենք ուղարկել թերթը և այս տարի: Բայց նրանք սխալվում են. մենք ոչ ոքին բռնի կերպով չենք կամենում ստիպել մեր Լրագրին գրվել: Թող այժման տաճն և իննսուրորդ դարում հայը ինքն հասկանայ, պարտաւոր է նա արդեօք գրվել հայ Լրագրին, թէ ոչ: պարտաւոր է նա արդեօք կարդալ հայերէն, թէ ոչ: Թող թիֆլիսը հասկանայ, արդեօք ամօթ չէ նրան, որ քառասուն հազար հայ բնակիչներից բաղկացած քաղաքը ստանում է ամենօրեայ լրագիր երկու թէ երեք հարիւր թուով: Զիչում ենք, որ դերմանական մի փոքրիկ քաղաք Հայդըրբերդի պէս, որ 16 հազար բնակիչ ունի միայն, տալիս է տեղական թերթին 5 հազար բաժանորդ, ուրեմն բնակիչների քառորդից աւելի: Այդ հաշուով թիֆլիսում, ուր կայ 40 հազար հայ բնակիչ, մի ամենօրեայ հայ թերթը պէտք է ունենար 10 հազար բաժանորդ: Իսկ մենք սովորաբար ունենք թիֆլիսում միայն երկու հարիւր, թէ երեք հարիւր բաժանորդ:

ՎԱՂԱՐՇԱՊԱՍԻՅ մեղ գրում են որ այդտեղ «Մշակ» ամենակատար թշնամիները երկու մութ և խաւար անձնաւորութիւններն են՝ Մ. Սեանց և Ն. Եանց, որոնք ամեն ջանք են գործ դնում վրդովեցնել ժողովուրդը «Մշակ» դէմ, որպէս զի մեր Լրագիրը շատ բաժանորդներ չուներ նախ Վաղարշապատում: Մենք չը գիտենք ուրիշ քաղաքներում կան արդեօք այդ տեսակ կատաղածներ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Արեւմտեան քաղաքական շրջանների մէջ նորերումս լուր տարածվեցաւ մի գաղտնի դաշնակցութեան մասին, որ իբր թէ կապ

մի ինչ որ բան *), որեց փոքրիկ ղէյլանի գլխի վրա, վառեց ղէյլանը, սկսեց ծխել: Մի րոպեում ամբողջ վրանը լցվեցաւ դառն, կծու և խեղդող ծխով: Բայց այդ արեւոցույց ծուլը որքան անտանելի էր ուրիշներին, այնքան բաւականութիւն էր պատճառում դէրվիշին: Նա արդէն մի տեսակ կիսաբուռ դրութեան մէջ, աչքերը փակած, նիւրճում էր, բայց ղէյլանը բաց չէր թողնում ձեռքից և ծուլը մանր օղակներով դուրս էր գալիս երբեմն նրա պնակներից, երբեմն սեռոակ և ուռած չրթուքի միջից: Սարսափելի էր նայել այդ կուճ եկած, մուշտո մարդու վրա, որ ներկայացնում էր մի չոր ու ցամաք կմախք, ոսկորների մի կոյտ, որ կոլոված էր իր սպիտակ շապիկի մէջ: Նրա աշխարհի դէմքի վրա երևում էին երբեմն տենդային ցնցումներ, իսկ երբեմն անցնում էր մի տեսակ չարախնդաց ժպիտ: Մերթ-մերթ նրա բերանից դուրս էին թռչում խուլ, անորոշ հառաչանքներ անհասկանալի բաների հետ:

—Երեք, ոգիները հետ է խօսում, ասաց խանը, մի առանձին շահաւատութեամբ նայելով դէրվիշի վրա:

Նա մի և նոյն դրութեան մէջ բուրբուրէր քրնեց, դարձեալ իր ձեռքից բաց չը թողնելով ղէյլանը: Մանկաւիկներից մէկը վերառեց ղէյլանը և ծածկեց նրան թանգազին շալից կարված մի թեթև վերմակով: Ի հարկէ, եթէ դէրվիշը տեսնէր այդ, շատ պիտի վիրաւորվէր, որ նրա ճգնութիւններով սպանված մարմինը ծածկում էին այս տեսակ շքեղ վերմակով:

Հաշիւուց յետոյ, երբ վերքաղեցին սեղանը, դարձեալ լուացվելու ջուր բերեցին. այնուհետեւ փոքրիկ, նախշուն ֆինջաններով մատուցին սուրճ առանց շաքարի: Բոլորից վերջը տրվեցաւ ղէյլան, բայց ոչ դէրվիշի դառն ղէյլանի նման, այլ պատրաստված Պարսկաստանի անուշահոտ ծխախոտից:

—Հիմա ժամանակ է մեզ արձակել, խան, ասաց Թորոս իշխանը, շնորհակալութիւն յայտնելով նրա հիւրասիրութեան համար:

*) Գէրվիշների ծխելիքը կոչվում է բանկ, որ պատրաստվում է կանեփի ծաղիկներից ուրիշ քաղաքորթիւնների հետ: Նա արեցնում է ծխողին և նրա ուղեղի մէջ երևան է հանում զանազան տեսիլքներ:

ված է Գերմանիայի և Սպանիայի մէջ: Ձը նայելով, որ այս լուրը շատ օտարոտի և անսպասելի էր, այնու ամենայնիւ նրան հաւատացին: Գտնվեցան մարդիկ, որոնք շատ բնական համարեցին քաղաքական այդ գործը: Յայտնի է, որ իշխան Բիսմարկ ղեռ 1870 թուականին կամենում էր Հոհենցոլերնների թագաւորական տան անդամներից մէկին բարձրացնել սպանիական դահլի վրա: Գտնի որ իշխան Բիսմարկի այդպիսի ձեռքառումների շարժառիթները ամենքին յայտնի էին, ուրեմն իշխան Բիսմարկի վերջին փորձն էլ Սպանիայի հետ դաշնակցութիւն կապելու մասին շատ բնական համարվեցաւ, որովհետեւ Գերմանիային միշտ հարկաւոր է ունենալ Ֆրանսիայի հարաւային կողմից մի դաշնակից, որը հարկաւոր դէպքում կարողանայ արդիւնէլ Ֆրանսիային կենտրոնացնել իր գործերը գերմանական սահմանների մօտ:

Իսկապէս Գերմանիայի և Սպանիայի դաշնակցութիւնը բաւական աներեւակայելի է: Եւրոպայի այժմեան դրութիւնը ի նկատի ունենալով, կարող է ի հարկէ այնպիսի մի դէպք պատահել, որ Գերմանիայի համար չափազանց պիտանի կը լինի Սպանիայի գլխաւորած օգնութիւնը, բայց չի կարելի ենթադրել այնպիսի մի անցք, որի ժամանակ Սպանիայի համար անհրաժեշտ լինի Գերմանիայի զինաւորված օգնութիւնը: Նրա Սպանիայի ամբողջութիւնը կատարելապէս ապահոված է դոնեա Ֆրանսիայի կողմից, որի դէմ կարող է ուղղված լինել Սպանիայի և Գերմանիայի դաշնակցութիւնը: Ֆրանսիացիները երբեք չեն մտածել և չեն էլ կարող ցանկանալ Սպանիայի մի մասը ձեռք բերել: Պիրենեան լեռների մօտ եղած սպանիական աղքատ նահանգները Ֆրանսիացիների համար ցանկալի չեն կարող լինել: Սպանիան, պահպանելով իր աշխարհ և բարեկամական յարաբերութիւններ ունենալ Ֆրանսիայի հետ՝ Նա անկարող է Ֆրանսիայի երկրից մի մասը ձեռք բերել մինչև անգամ այն դէպքերում, եթէ պատահաբար Գերմանիան, նորից յաղթէ

—Ինչպէս կարելի է, դեռ մենք ձեզ ոչինչ ծառայութիւն չենք ցուց տուած, պատասխանեց խանը ներողութիւն խնդրելով,—դուք պիտի մընաք մի քանի օրեր, մի քանի շաբաթներ, որ մենք կատարելապէս կարողանանք ձեր պարտաւորութիւնից դուրս գալ:

Իշխանը նոյն կեղծ—քաղաքավարական ոճով յայտնեց, որ ինքը չափազանց շնորհակալ է խանից, որ կատարեց նրա խնդիրը և իրան միշտ բախտաւոր կը համարէ, որ վայելում է նրա բարեկամութիւնը, և յոյս ունի, որ այդ բարեկամութիւնը անխախտ կը մնայ, եթէ խոտվարար մարդիկ չը խանդարեն նրան: Վերջին խօսքերով նա ակնարկում էր երկու հայ մէլիքների վրա:

—Դուք այդ մասին անհոգ կացէք, իշխան, պատասխանեց խանը երգվելով,—իմ հօր գերեզմանում թող կրակ լցրած լինեմ, եթէ ձեր մի մաղը փոխելու լինեմ հազար այն տեսակ մարդիկների հետ:

Գիտոյ հրամայեց նա իր սանդուխտարին (գանձապահին) իշխանի և պատանի Ստեփաննոսի համար պատրաստեն ընծաներ: Իշխանի համար դուրս բերեցին մի փառաւոր վերարկու (ջուբայ) որ կարված էր Գիշմիրի թանգազին շալից և զարդարած ոսկէ թելերով: Այդ վերարկուն խանի սեպհական վերարկուն էր, որ միանգամ միայն հագել էր նա, երբ ներկայացաւ պարսից շահին. այժմ ընծայելով իշխանին, պարսից միջերի սովորութեամբ մի առանձին պատիւ էր անում իշխանին, պարգեւելով մի այնպիսի խաւաթ (*), որ վեր էր առնված նորին գերազանցութեան խանի սեպհական թիկունքից: Բացի դրանից ընծայեց նրան մի գեղեցիկ ջօնվարդար**) թուր, խորասանի գործ, արծաթեայ պատեանով և թանգազին ակներով զարդարած երախակալով: Պատանի Ստեփաննոսի ընծաները աւելի հրապուրելի էին. նա ստացաւ

*) Խաւաթ նշանակում է պարսից այն ընծաները, որ տրվում են հազուադէպ յայտնվեցէ հայոց իշխան քառու:

**) Ջօնվարդ ար կոչվում են այն տեսակ սրերի շեղբերը, որոնք խաւայի նման նկարներ ունեն և որոնց պատճառած վէրքը անբժշկելի է դառնում: Այս տեսակ սրերը այժմ Պարսկաստանում համարվում են հնութիւն, որովհետեւ նրանց արհեստը կորած է:

Ֆրանսիային և նրա երկիրը աւերակ դարձնէ: Ուրեմն եթէ Սպանիան համաձայնի օգնել Գերմանիային, նա այդ բանը պէտք է անի առանց որ և է շահ ունենալու: Ջարմանալի չէ ուրեմն, որ սպանիական կառավարութիւնը հարկաւոր համարեց հաստատապէս հերքել տարածված այդ լուրը: Պատասխանելով ընդդիմադրական կուսակցութեան անդամներից մէկի հարցին, սպանիական արտաքին գործերի միւնիստրը յայտնեց, որ այդպիսի դաշնակցութիւն չը կայ և որ Սպանիայի և Ֆրանսիայի փոխադարձ յարաբերութիւնները ամենարեւելաւորն են:

Ս. յուսւ ամենայնիւ հաստատապէս կարելի է ասել, որ գերմանական դիպլոմատիան Մարդիքի մէջ փորձեր էր անում բարեկամութիւն հաստատել Սպանիայի և Գերմանիայի մէջ: Իշխան Բիսմարկ միշտ գործը կատարելու առաջ նախապատրաստութիւններ է արել: Ամենքին յայտնի է, որ Ֆրանսիայի այժմեան բարօրութիւնը և կառավարչական ձեւի տեղադրանքները չափազանց անհանգիստ է անում Բիսմարկին: Բիսմարկ սխալվեցաւ ենթադրելով, որ Ֆրանսիայից վերցրած կոնտրիբուցիան և երկու նահանգների խելը, նրան երկար ժամանակով կը թուլացնէ: Նա նկատում է, որ 1870 թուականին յաղթված Ֆրանսիան վերականգնում է իր ոյժերը և որ Ֆրանսիայի վերանորոգվելուց յետոյ նրա կառավարութիւնը կաշխատէ վրէժ առնել Գերմանիայից, վերադարձնել կորցրած նահանգները և ձեռք բերել իր առաջնակարգ դիրքը եւրոպական պետութիւնների շարքում: Գերմանական կառավարութիւնը պէտք է պատրաստվի ապագայ այդ պատերազմի համար: Նա կուզեւ նախ ձեռք բերել Սպանիայի դաշնակցութիւնը, բայց այս վերջինը ոչ թէ միայն չի կարող թշնամաբար վարվել Ֆրանսիայի հետ, այլ ընդհակառակը նրա շահերը պահանջում են բարեկամական յարաբերութիւններ պահպանել իր մօտաւոր դրացու հետ:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

մի ալմաստ մատանի և դէնքերի մի ամբողջ խաւում՝ թուր, հրացան, ատրճանակներ, գնտակի և վառօդի ամաններ, բոլորը ոսկեղօծ, արծաթով զարդարած և օսւ սնաղով մինա արած: Բացի դրանցից, նա ստացաւ մի գեղեցիկ նոյզ իր ամբողջ ասպաղնէքով:

Պատանի Ստեփաննոսին խիստ ծանր էր ընծաներ ընդունել այն զազանի ձեռքից, որ թախախտ էր իր հօր, իր մօր և իր ազգատոհմի արկնով: Այսուամենայնիւ, նա զսպեց իր մէջ վրէժխնդրութեան զգացմունքը, և խոնարհվելով ընդունված քաղաքավարական ձեւերին, յայտնեց իր շնորհակալութիւնը խանի առատաձեռնութեան և բարեսիրտութեան մասին:

Թէ իշխանի և թէ պատանու նոյզները արդէն կանգնեցրած էին վրանի հանդէպ. նրանք դուրս եկան, և խանը թափելով չողոքորթութեան և բարեկամական արտայայտութիւնների մի ամբողջ հեղեղ, ճանապարհ դրեց նրանց մինչև նըժոյգների մօտ: Նա իր ձեռքով բռնեց իշխանի նոյզի անագնազակը և հրաւիրեց նստել:

—Այդ, արդէն չափից դուրս է, ասաց իշխանը հրաժարվելով:

Խանը խնդրում էր ընդունել այդ ծառայութիւնը, որ նրա հիւրասիրութեան և բարեկամական մտեմտութեան աւելի ազդու արտայայտութիւն էր: Բայց իշխանը չը կամենալով մինչև այս աստիճան ստորացնել նրան, ինքը թուաթամբի վրա, առանց ընդունելու նրա ձեռքից ասպանդակը, Պատանի Ստեփաննոսը իր նոր գէնքերով զինաւորված, արդէն գտնվում էր իր նոյզի վրա: Հայոց ձիաւորների խմբից լսելի եղաւ փողի ձայնը, որ նշան էր հրաժեշտի:

—Մնաք բարեւ, խան, ասեցին իշխանը և պատանի Ստեփաննոսը, իրանց նոյզների վրայից գլուխ տալով:

—Բարեւ ճանապարհ, պատասխանեց խանը, նոյնպէս գլուխ տալով:

Վերադառնալով իր վրանը, նա իր մտքում ասաց. «Ես քո հպարտութիւնը, չուն հայ, մի խնցեղէն ամանի նման ոտքերիս տակ կը փըշրեմ...»

(Կը շարունակվի)